

1872



Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՊԱՅԻՖԻՉՄ ԲՈՒՐՋՈՒԱԿԱՆ
ՅԵՎ.
ՊԱՅԻՖԻՉՄ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ

ՅԿՁՅ

Գ-ՅԵ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՐ
01 JUN 2005

ՅԿ23

7-36

պ.

20 NOV 2009

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՊԱՑԻՖԻԶՄ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ
ՅԵՎ
ՊԱՑԻՖԻԶՄ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ

11 SEP 2013

7872



1220
40

В. И. ЛЕНИН
ПАЦИФИЗМ БУРЖУАЗНЫЙ
И

ПАЦИФИЗМ СОЦИАЛИСТИЧЕСКИЙ

Государственное издательство политической литературы
Ереван • 1940

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏԵ

«Պացիֆիզմ բուրժուական և պացիֆիզմ սոցիալիստական» հոդվածը Վ. Ի. Լենինը գրել է 1917 թ. հունվարի 1-ին: Յենթավերնագրերից դատելով՝ հոդվածը նախատեսված էր ժողովրդի համար կամ պետք է կաղմեր լրագրային հոդվածաշար: 1917 թ. հունվարին «Социал-демократ»-ի № 58-ում տպագրված էր «Երջադարձ համաշխարհային քաղաքականության մեջ» հոդվածը, վորն իրենից ներկայացնում էր սույն աշխատության առաջին յերկու գլուխների վերամշակումը: Ամբողջ աշխատությունն առաջին անգամ հրատարակվեց միայն 1924 թ. «Ленинский сборник»-ի II հատորում:

«Պացիֆիզմ բուրժուական և պացիֆիզմ սոցիալիստական» բրոշյուրի ներկա հրատարակության մեջ մտցված է նաև «Երջադարձ համաշխարհային քաղաքականության մեջ» հոդվածը: Տեքստը տպագրվում է ըստ Յերկերի XIX հատորի: Գրքույկի վերջում տրվում է այն անունների ցանկը, վորոնք հանդիպում են տեքստի մեջ:

ՊԱՅԻՖԻԶՄ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՅԵՎ ՊԱՅԻՖԻԶՄ
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ

ՀՈԴՎԱԾ (ԿԱՄ ԳԼՈՒԽ) I

ՇՐՋԱԴԱՐՁ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԵՋ

Նշաններ կան, վոր այդպիսի շրջադարձը հասել է կամ հասնում է: Այն է—շրջադարձ իմպերիալիստական պատերազմից դեպի իմպերիալիստական հաշտություն:

Իմպերիալիստական յերկու կողմիցիաների անկասկած խիստ ուժասպառվելը. պատերազմն ելի շարունակելու դժվարությունը. դժվարություն կապիտալիստների համար ընդհանրապես և Ֆինանսական կապիտալի համար մասնավորապես՝ ժողովրդից քերթել ելի վորեւէ չափով, բացի յերկու և ավելի մորթիներից, վոր քերթել են վորպես «պատերազմական» խայտառակ շահույթներ. չեզոք յերկրների՝ Միացյալ Նահանգների, Հոլանդիայի, Շվեյցարիայի և այլն Ֆինանսական կապիտալի հազենալը, քանի վոր պատերազմի ժամանակ նա հսկայական չափով հարստացել է և հետո չէ նրա համար շարունակել այդ «չահավետ» տնտեսությունը՝ նկատի ունենալով հում նյութերի և ուտելիքների պակասը. Գերմանիայի ուժգին փորձերն՝ անջատել իր դքս-խափոր իմպերիալիստական ակոյանից, Անգլիայից, նրա այս կամ այն դաշնակցին. գերմանական կառավարություն, իսկ նրանից հետո նաև մի շարք չեզոք յերկրների կառավարությունների խաղաղասիրական յելույթները—ահա այդ նշաններից ամենազլխափորները:

Կա՞ն չանսեր, վոր պատերազմը չուտով կվերջանա, թե վոչ:

Այդ հարցին շատ դժվար է դրական պատասխան տալ: Մեր կարծիքով՝ բավական վորոշակի գծադրվում է յերկու հնարավորություն.

Առաջինը—Գերմանիայի և Ռուսաստանի միջև կնքված
և սեպարատ հաշտություն, թեկուզ և վոչ գրավոր ֆորմալ
դաշնադրի ստվորական ձևով։ Յերկրորդը—այդպիսի հաշ-
տություն չի կնքված։ Անգլիան և նրա դաշնակիցներն իրոք
ուժ ունեն դիմանալու դեռ և՛ մեկ, և՛ յերկու տարի և այլն։
Առաջին դեպքում՝ պատերազմը յեթե վոչ այժմ, ապա ամե-
նամոտ ապագայում անխուսափելի կերպով կվերջանա և
նրա բնթացքի մեջ լուրջ փոփոխություններ չի կարելի
սպասել։ Յերկրորդ դեպքում հնարավոր է նրա անորոշ
յերկարատե շարունակումը։

Կանգ առնենք առաջին դեպքի վրա։

Վոր Գերմանիայի և Ռուսաստանի միջև հենց վերջերս
բանակցություններ են վարվել սեպարատ հաշտության մա-
սին, վոր ինքը Նիկոլայ II կամ պալատական ամենաաղքե-
ցիկ ավադակախումբը կողմնակից է այդպիսի հաշտության,
վոր համաշխարհային քաղաքականության մեջ նշմարվում է
չրջադարձ Գերմանիայի դեմ ուղղված Ռուսաստանի և Ան-
գլիայի իմպերիալիստական դաշինքից դեպի Ռուսաստանի և
Գերմանիայի վոչ-պակաս իմպերիալիստական դաշինքն՝
ընդդեմ Անգլիայի, այս ամենը չի կարող կասկած հարու-
ցել։

Ետյուրմերի փոխարինումը Տրեպովով, ցարիզմի հրա-
պարակային հայտարարությունը, թե Ռուսաստանի «իրա-
վունքը» Կոստանդնուպոլսի վրա ճանաչված է բոլոր դաշ-
նակիցների կողմից, լեհական առանձին պետություն ստեղ-
ծելը Գերմանիայի կողմից—այս նշանները վկայում են կար-
ծեա այն մասին, թե սեպարատ հաշտության չուրջը բանակ-
ցությունները վերջացել են անհաջողությամբ։ Գուցե, ցա-
րիզմը վարում էր այդ բանակցությունները միայն նրա հա-
մար, փորպեսզի շանտաժի յենթարկի Անգլիային, վորպես-
զի ստանա նրանից Նիկոլայ Արշունարբուի «իրավունքների»
ֆորմալ ու վոչ-յերկրամի ճանաչումը Կոստանդնուպոլսի
վրա և այդ իրավունքի այս կամ այն «լուրջ» յերաշխիքը։

Քանի վոր տվյալ իմպերիալիստական պատերազմի
գլխավոր, հիմնական բովանդակությունն ավարի բաժանու-
մբն է յերեք գլխավոր իմպերիալիստական ախոյանների, յե-
րեք ավադակների՝ Ռուսաստանի, Գերմանիայի և Անգլիա-

յի միջև, ապա այդպիսի յենթադրության մեջ վոչ մի ան-
հալանական բան չկա։

Մյուս կողմից, վորքան ցարիզմի համար ավելի յե
զծադրվում փաստական, ռազմական անհնարինություն՝ վե-
րադարձնել Ահապտանը, նվաճել Կոստանդնուպոլիսը, կոտ-
րել գերմանական յերկաթե ճակատը, վորը Գերմանիան
հիանալի կերպով ուղղում է, կրճատում և ամրացնում՝
Ռումինիայում վերջերս տարած իր հաղթություններով,
այնքան ցարիզմն ավելի յե հարկադրվում Գերմանիայի հետ
սեպարատ հաշտություն կնքելու, այսինքն՝ Անգլիայի հետ
Գերմանիայի դեմ կնքած իմպերիալիստական դաշինքից
անցնելու իմպերիալիստական դաշինքի Գերմանիայի հետ—
ընդդեմ Անգլիայի։ Յեվ ինչո՞ւ չէ։ Չե՞ վոր Ռուսաստանի
և Անգլիայի միջև պատերազմը մի մաղից եր կախված՝ Մի-
ջին Ասիայում ավարը բաժանելու առթիվ յերկու տերու-
թյունների իմպերիալիստական մրցակցության շնորհիվ։
Չե՞ վոր Անգլիայի և Գերմանիայի միջև 1898 թվին բանակ-
ցություններ են վարվել Ռուսաստանի դեմ դաշինք կնքելու
համար, ըստ վորում Անգլիան ու Գերմանիան այն ժամա-
նակ զաղտնի պայմանավորվել են իրենց միջև բաժանել
Պորտուգալիայի դաղութներն՝ «ի դեպ», յեթե նա չկատա-
րի Ֆինանսական իր պարտավորությունները։

Գերմանիայի ղեկավար իմպերիալիստական շրջանների
ուժգին ձգտումը Ռուսաստանի հետ դաշինք կնքելու ընդ-
դեմ Անգլիայի՝ վորոշակի յե դարձել արդեն մի քանի ամիս
թրանից առաջ։ Դաշինքի հիմք է լինելու, ըստ յերեուլթին,
Դալիցիայի (ցարիզմի համար շատ կարևոր է խեղդել
ուկրաինական աղիտացիայի և ուկրաինական ազատության
կենտրոնը), Հայաստանի, կարող է պատահել և Ռումինիա-
յի բաժանումը։ Չե՞ վոր գերմանական մի թերթում «ակ-
նարկություն» էր սպրդել այն մասին, թե իբր Ռումինիան
կարելի յե բաժանել Ալստրիայի, Բուլղարիայի և Ռուսաս-
տանի միջև։ Գերմանիան կարող էր համաձայնել ցարիզ-
մին ելի միջանի բան «գիջելու», միայն թե իրացնի դաշինքն
Ռուսաստանի, գուցե նաև Յապոնիայի հետ՝ ընդդեմ Ան-
գլիայի։

Սեպարատ հաշտութիւնը կարող եր ներկայ II-ի և Վիլհելմ II-ի միջև կնքվել զաղտնաբար: Դիվանագիտութեան պատմութիւնը դիտեալ զաղտնի դաշնադրերի որինակներ, վորոնց մասին, բացառութեամբ 2—3 հոգու, վոչ վոք, նուրիսկ մինիստրները չեն իմացել: Դիվանագիտութեան պատմութիւնն որինակներ դիտեալ, յերբ «մեծ տերութիւնները» զնացել են «ընդհանուր յեկրոպական» կոնդրես՝ նախապես զաղտնաբար պայմանաւորվելով զլիաւոր արտոյաններէ միջև՝ զլիաւորի մասին (որին, 1878 թիւն Բեռլինի կոնդրեսից առաջ Ռուսաստանի և Անգլիայի զաղտնի համաձայնութիւնը՝ Թուրքիան կողոպտելու մասին): Ամենեւին եւ զարմանալի չեր լինի, յեթե ցարկզմը ժխտեր կառավարութիւններէ միջև սեպարատ, Փորմալ հաշտութիւնը, ի միջի այլոց, այն նկատառումներով, թե Ռուսաստանի այժմեան կացութեան պայմաններում նրա կառավարութիւնը կարող ելին այն ժամանակ լինել Միլլոկովը՝ Գուչկովի հետ կամ Միլլոկովը՝ Կերենսկու հետ, և միաժամանակ կնքեր Գերմանիայի հետ զաղտնի, վոչ-Փորմալ, բայց վոչ-պահա «կայուն» պայմանադրի այն մասին, վոր յերկու «պայմանաւորվող բարձր կողմերը» հաշտութեան ապագա կոնդրեսում միատեղ վարելու յեն այսինչ գիծը:

Արդոք ճիշտ ե այդ յենթադրութիւնը, թե վոչ—չի կարելի վորոչեւ: Բայց համենայն դեպս, այդ յենթադրութիւնը հաղար անգամ ավելի յե սլարունակում իր մեջ նշմարտութիւն, բնութագրումն այն բանի, ինչ կա, քան անվերջ կրկնվող բարի Փրազներն այժմեան և ընդհանրապես բուրժուական կառավարութիւններէ միջև՝ աննեքսիաների և այլնի ժխտման հիման վրա հաշտութիւն կայացնելու մասին: Այդ Փրազները—կամ անմեղ ցանկութիւններ են, կամ սուտ ու կեղծիք, վոր ծառայում են ճշմարտութիւնը թաղցնելու համար: Հաշտութիւն կնքելու փորձերի տվյալ ժամանակի, տվյալ պատերազմի, տվյալ մոմենտի ճշմարտութիւնը իմպերիալիստական ավարը բաժանելն ե: Այդ ե ելութիւնը. և ըմբռնել այդ ճշմարտութիւնը, արտահայտել այն, «արտահայտել այն, ինչ կա»,—այս ե ողորդական քաղաքականութեան արմատական ինդիւրն, ի տար-

բերութիւն բուրժուականից, վորի համար զլիաւորը՝ այդ ճշմարտութիւնը թաղցնելը, սքողելն ե:

Իմպերիալիստական յերկու կողմիցիաներն ել թալանել են վորոչ քանակութեամբ ավար, ընդվորում հենց յերկու զլիաւոր ու ամենաուժեղ զիշատիչները, Գերմանիան և Անգլիան, ամենից շատ են թալանել: Անգլիան իր յերկրից և իր զաղութներից չի կորցրել և վոչ մի թիզ, «ձեռք բերելով» գերմանական զաղութներն ու Թուրքիայի մի մասը (Միջագետք): Գերմանիան կորցրել ե համարյա իր բոլոր զաղութները, բայց ձեռք ե բերել Յեկրոպայում անհամեմատ ավելի արժեքաւոր տերիտորիաներ, զրավելով Բելգիան, Սերբիան, Ռումինիան, Ֆրանսիայի մի մասը, Ռուսաստանի մի մասը և այլն: Սոսքը վերաբերում ե այդ ավարը բաժանելուն, ըստ վորում ամեն մի ավաղակամի «ատամանը», այսինքն՝ թե՛ Անգլիան, թե՛ Գերմանիան պետք ե այս կամ այն չափով վարձատրի իր դաշնակիցներին, վորոնք, բացառութեամբ Բուլղարիայի և ավելի պակաս չափով՝ Իտալիայի, առանձնապես շատ են կորցրել: Ամենաթույլ դաշնակիցներն ամենից շատ են կորցրել. անգլիական կողմիցիայից ջախջախված են՝ Բելգիան, Սերբիան, Չերնոգորիան, Ռումինիան, գերմանականից՝ Թուրքիան կորցրել ե Հայաստանը և Միջագետքի մի մասը:

Մինչև այժմ Գերմանիայի ավարն անկասկած և շատ նշանակալից չափով ավելի յե, քան Անգլիայի ավարը: Մինչև այժմ Գերմանիան հաղթանակել ե, լինելով անհամեմատ ավելի ուժեղ, քան վորեւ մեկը յենթադրում եր՝ պատերազմից առաջ: Ուստի և հասկանալի յե, վոր Գերմանիայի համար շահավետ կլիներ վորքան կարելի յե շուտ հաշտութիւն կնքել, քանի վոր նրա արտոյանը կարող ե դուրս երկն համար ամենաշահավետ հնարավոր (թեպետեւ վոչ շատ հաւանական) դեպքում գործի դնել նորակոնցներէ մեծ պահեա և այլն:

Այսպես ե որչեկտիվ գրութիւնը: Այսպես ե իմպերիալիստական ավարը բաժանելու համար մղվող պայքարի տվյալ մոմենտը: Միանգամայն բնական ե, վոր այդ մոմենտն առաջ ե բերել խաղաղասիրական ձգտումներ, հայտարարութիւններ և յելույթներ առավելապես գերմանա-

կան կռաւիցիայի, ապա նաև չեղող յերկրներէ բուրժուա-
դէրայի և կառավարութեաններէ կողմից: Նույնպէս բնական
է, վոր բուրժուադէրան և նրա կառավարութեաններն ստիպ-
ված են ամբողջ ուժով ձգտել այն բանին, վոր հիմարաց-
նեն ժողովուրդներին, ծածկելով իմպերիալիստական հաշ-
տութեան, թաւախի բաժանման նողկալի մերկութեանը
Ֆրազներով, — դեմոկրատական հաշտութեան, վորք ժողո-
վուրդներէ ազատութեան, սպառազինութեաններէ կրճատ-
ման վերաբերյալ և այլն՝ Ֆրազներով, ամբողջովին կեղծ
Ֆրազներով:

Բայց յեթե բուրժուադէրան բնական ձգտումն ունի հի-
մարացնել ժողովուրդներին, ապա ի՞նչ կերպ են կատարում
իրենց պարտականութեանը սոցիալիստները: Դրա մասին
հետեւյալ հոդվածում (կամ զլխում):

ՀՈՒՎԱԾ (ԿԱՄ ԳՆՈՒՆ) II

ԿԱՌԻՑՎՈՒ ՅԵՎ ՏՈՒՐԱՏԻԻ ՊԱՅԻՖԻԶՄԸ

Կառուցելին II Ինտերնացիոնալի ամենահեղինակաւոր տե-
սաբանն է, Գերմանիայի այսպէս կոչված «մարքսիստական
կենտրոնի» ամենանշանաւոր առաջնորդը, այն ուղղիցիայի
ներկայացուցիչը, վորը ռայխստագում ստեղծել է առանձին՝
«սոցիալ-դեմոկրատական աշխատավորական խմբակ» Ֆրակ-
ցիան (Հաագե, Լեդերուր և ուրիշներ): Գերմանիայի սոցիալ-
դեմոկրատական մի շարք թերթերում այժմ դետեղված են
հաշտութեան պայմաններէ վերաբերյալ՝ Կառուցելու հոդված-
ները, վորոնք բառափոխութեանն են «սոցիալ-դեմոկրատա-
կան աշխատավորական խմբի» պաշտոնական հայտարարու-
թեան, վորով սա հանդես եր յեկել դերմանական կառավա-
րութեան՝ հաշտութեան բանակցութեաններ առաջարկող
հայտնի հայտադրի առթիւ: Պահանջելով կառավարութեան-
նից առաջարկել հաշտութեան վորոշակի պայմաններ, այդ
հայտարարութեանն, ի միջի այլոց, պարունակում է հետե-
ւիյալ բնորոշ Ֆրազը.

...«Վորպեսզի այդ հայտադրերը (դերմանական կառա-
վարութեան) հաշտութեան բերի, անհրաժեշտ է, վոր բոլոր
յերկրներում աներկմիտ կերպով մերժվի ուրիշի մարդերն

աննեքսիայի յենթարկելու միտքը, վորեւ ժողովրդի քաղա-
քական, տնտեսական կամ ռազմական յենթարկումը մի այլ
պետական իշխանութեան»...

Բառափոխելով և կոնկրետացնելով այս դրույթը՝ Կա-
ռուցելին իր հոդվածներում հանդամանորեն «ապացուցում է»,
վոր Կոստանդնուպոլիսը չպետք է տրվի Ռուսաստանին և
վոր Թյուրքիան չպետք է դառնա վորեւ մեկի վաստալ պե-
տութեանը:

Ուշադրութեամբ դնենք Կառուցելու և նրա համախոհներէ
այս քաղաքական լողուններն ու փաստարկումները:

Յերբ խնդրը վերաբերում է Ռուսաստանին, այսինքն՝
Գերմանիայի իմպերիալիստական ակտիանին, այն ժամանակ
Կառուցելին առաջ է քաշում վո՛չ թե վերացական, վո՛չ թե
«ընդհանուր», այլ միանգամայն կոնկրետ, հստակ, վորոշ
մի պահանջ՝ Կոստանդնուպոլիսը չպետք է տրվի Ռուսաս-
տանին: Դրանով իսկ նա մերկացնում է... Ռուսաստանի
իսկական իմպերիալիստական դիտավորութեանները: Յերբ
խնդրը վերաբերում է Գերմանիային, այսինքն՝ հենց այն
յերկրին, վորի բուրժուադէրային և կառավարութեանն ող-
նում է իմպերիալիստական պատերազմ մղելու այն կուսակ-
ցութեան մեծամասնութեանը, վորը Կառուցելուն իր անդամն
է համարում (և Կառուցելուն նշանակել է իր զլխավոր, դե-
կավար, տեսական «Neue Zeit» որդանի խմբադիր), այն ժա-
մանակ Կառուցելին չի մերկացնում իր կառավարութեան իմ-
պերիալիստական կոնկրետ դիտավորութեանները, այլ սահ-
մանափակվում է «ընդհանուր» ցանկութեամբ կամ դրույ-
թով՝ Թյուրքիան չպետք է դառնա վորեւ մեկի վաստալ
պետութեանը:

Իր իսկական բովանդակութեամբ եւ ինչո՞ւ է տարբեր-
վում Կառուցելու քաղաքականութեանը Փրանսիայի և Ան-
գլիայի մարտական, այսպէս ասած, սոցիալ-չովինիստներէ
(այսինքն՝ խոսքով սոցիալիստներէ, իսկ դործով — չովի-
նիստներէ) քաղաքականութեանից, վորոնք ուղղակի մեր-
կացնում են Գերմանիայի իմպերիալիստական կոնկրետ քա-
ղերը, բալականանալով «ընդհանուր» ցանկութեաններով
կամ դրույթներով այն յերկրներէ կամ ժողովուրդներէ վե-
րաբերմամբ, վորոնք դրաւված են Անգլիայի և Ռուսաստա-

նի կողմից. աղաղակում են Բեղիայի, Սերբիայի դրամման մասին, իսկ Գալլիցիայի, Հայաստանի, աֆրիկյան դադութները դրամման մասին լուծում են:

Գործնականում կառուցվում է Սամբա-Հենդերսոնի քաղաքականությունը միատեսակ ոգնում է իրենց խմբերի ալիստական կառավարություններին, զլխավոր ուշադրությունը դարձնելով ախոյանի և թշնամու չար նենդամտությունների վրա, մշուշապատ, ընդհանուր ֆրազների և բարի ցանկությունների ըողի տակ առնելով «իրենց» բուրժուազիայի նույնչափ իմպերիալիստական քայլերը: Յեւ մենք կղաղաբեյնք մարքսիստ լինելուց, կղաղաբեյնք ընդհանրապես սոցիալիստ լինելուց, յեթե սահմանափակվեյինք բարի ընդհանուր ֆրազների բարություն քրիստոնեական, այսպես ասած, հայեցությունը, չմերկացնելով նրանց քաղաքական իսկական նշանակությունը: Մեթե մենք միշտ ել չենք տեսնում, վոր բոլոր իմպերիալիստական տերությունները դեմանադիտությունը պճնադարդվում է ամենադեղեցկահոգի «ընդհանուր» ֆրազներով և «գեմոկրատական» հայտարարություններով, նրանցով քողարկելով վորք ժողովուրդները թալանումը, բռնաբարումն ու խեղդումը:

«Թյուրքիան չպետք է դառնա վորեւ մեկի վաստակ պետությունը»... Յեթե յես միայն այդ եմ ասում, այնպիսի տպավորություն է ստացվում, թե յես Թյուրքիայի վիսկատար ազատություն կողմնակից եմ: Բայց իրականում յես կրկնում եմ միայն մի ֆրազ, վոր սովորաբար արտասանում են նաև գերմանական դիմանադետները, վորոնք ակնհայտորեն ստում և կեղծում են, այդ ֆրազով թաղցնելով այն փաստը, վոր Գերմանիան այս րոպեյիս Թյուրքիային վերածել է իր քե' ֆինանսական, քե' ռազմական վաստակի: Յեւ յեթե յես գերմանական սոցիալիստ եմ, ապա գերմանական դիմանադիտությունը միայն ձեռնուր յեմ իմ «ընդհանուր» ֆրազները, վորովհետեւ նրանց իսկական իմաստն է՝ գեղազարդել գերմանական իմպերիալիզմը:

...«Բոլոր յերկրներում պետք է մերժվի աննեքսիաների վերաբերյալ միտքը, ... վորեւ ժողովրդի անտեսական յենթարկման վերաբերյալ միտքը»... վորպիսի գեղեցկահոգով յո՛ւն: Իմպերիալիստները հազարավոր անգամ «մերժում

են» աննեքսիաների և թույլ ժողովուրդներին ֆինանսապետ խեղդելու «միտքը», բայց պետք չե՞ արդյոք դրան զուգադրել այն փաստերը, վորոնք յույց են տալիս, վոր Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Միացյալ Նահանգների ամեն մի խոշոր բանկը «կախման մեջ» է պախում վորք ժողովուրդներին: Կարո՞ղ է արդյոք գործնականում հարուստ յերկրի աշխատանքի բուրժուական կառավարությունը մերժել աննեքսիաները և ոտար ժողովուրդների անտեսական յենթարկումը, յերբ միլիարդներ և միլիարդներ են չեղդվել թույլ ժողովուրդների յերկաթուղիներում և այլ ձեռնարկություններում:

Ո՞վ է իրապես պայքարում աննեքսիաների և այլնի դեմ, — արդյո՞ք նա, ով քամու բերանն է գցում գեղեցկահոգի ֆրազներ, վորոնց որչեփով նշանակությունը միանգամայն համադր է քրիստոնեական սուրբ ջրին, վոր ցանում են թաղակիր և կապիտալիստական ավազակների վրա, թե՞ նա, ով պարզաբանում է բանվորներին, թե անհնար է վերջ տալ աննեքսիաներին ու ֆինանսական խեղդումներին, առանց տապալելու իմպերիալիստական բուրժուազիային և նրա կառավարությունները:

Ահա կառուցվում քարոզած պացիֆիզմի նաև իտալական իլյուստրացիան:

Իտալական սոցիալիստական կուսակցության «Avanti!» («Հաուա՛ջ») կենտրոնական որդանում 1916 թ. գեկտեմբերի 25-ին հայտնի ռեֆորմիստ Ֆիլիպպո Տուրատին գետեղել էր «Արբակադարա» վերնադրով մի հոգւած: 1916 թ. նոյեմբերի 22-ին, — գրում է նա, — Իտալիայի պառլամենտական սոցիալիստական խումբը հաշտության վերաբերյալ առաջարկ մտցրեց պառլամենտ: Այդ առաջարկության մեջ նա «հավաստել էր իր համաձայնությունն այն սկզբունքներին, վոր հայտարարված են Անգլիայի և Գերմանիայի ներկայացուցիչների կողմից, սկզբունքներ, վորոնք պետք է հնարավոր հաշտության հիմքը կազմեյին, և առաջարկել էր կառավարությանը՝ Միացյալ Նահանգների և այլ չեղոք յերկրների միջոցով սկսել հաշտության բանակցությունները»: Սոցիալիստական առաջարկության բովանդակությունն այդպես է չարագրում ինքը Տուրատին:

1916 թ. դեկտեմբերի 6-ին պալատը «Թաղում և» սոցիալիստական առաջարկը, «հետաձգելով» նրա քննությունը: Դեկտեմբերի 12-ին դերմանական կանցլերը սոցիալիստական դում իր կողմից առաջարկում է այն, ինչ վոր ցանկանում եյին Խալիպայի սոցիալիստները: Դեկտեմբերի 22-ին իր հայտագրով հանդես է գալիս Վիլսոնը, վորն—ըստ Ֆ. Տուրատիի արտահայտություն—«բառավորում է կրկնում և սոցիալիստական առաջարկության դադարվարներն ու դրդապատճառները»: Դեկտեմբերի 23-ին բեմ են դուրս գալիս այլ չեզոք պետություններ, վորոնք բառավորում են Վիլսոնի հայտագիրը:

Մեղ մեղադրում են, վոր մենք վաճառվել ենք Գերմանիային, բացականչում է Տուրատին: Չե՞ն վաճառվել Գերմանիային արդյոք և՛ Վիլսոնը, և՛ չեղոք պետությունները:

Դեկտեմբերի 17-ին Տուրատին պառլամենտում ձառարտասանեց, վորի մի տեղն արտաստվոր—և միանգամայն տեղին—սենսացիա առաջ բերեց: Ահա այդ տեղը, ըստ «Avanti!»-ի հաշվետվության.

... «Յենթադրենք, թե այն տեսակ քննությունը, վոր մեզ առաջարկում է Գերմանիան, կարող է հիմնական զծեւրով լուծել Բեռլինայի, Ֆրանսիայի, Լվալուացիայի, Ռումինիայի, Սերբիայի և, յեթե կուզեք, Չեքոսլովակիայի վերականգնման հարցերը. յես ձեզ կալեւաքնեմ խաւախոս սահմանների ուղղումն այն տեղերի նկատմամբ, վորոնք անվիճելի կերպով խաւական են և համապատասխանում են ստրատեգիական բնույթի ապահովություններին»... Այստեղ բուրժուական և չովինիստական պալատն ընդհատում է Տուրատին. ամեն կողմից բացականչություններ են հնչում—«Հիանալի՛ յե: Ուրեմն դո՞ւք ել եք ցանկանում այդ ամենը: Կեցցե՛ Տուրատին: Կեցցե՛ Տուրատին»...

Տուրատին, ըստ յերևութին, զգալով բուրժուական այդ ցնծության մեջ ինչ—վոր անհարմար բան, վորձում է «ուզվել» կամ «բացատրվել».

... «Պարոնայք, —ասում է նա, —անտեղի կատակ հարկավոր չէ: Այլ բան է ճանաչել աղբային միասնության անհրաժեշտությունն ու իրավունքը, վորը մենք միշտ ել ճա-

նաչել ենք. այլ բան է—այդ նպատակով պատերազմ առաջ բերել կամ արդարացնել այն»:

Վո՛չ Տուրատիի այդ «բացատրությունը», վո՛չ «Avanti!»-ի հոդվածն ի պաշտպանություն նրա, վո՛չ Տուրատիի դեկտեմբերի 21-ի նամակը, վո՛չ ել Յուրիխի «Volksrecht»-ում¹ վոմն «b b»-ի տպած հոդվածը բնավ չեն «ուզում» դրությունը և չեն վերացնում այն փաստը, վոր Տուրատին բռնվել է... Ավելի ճիշտը՝ բռնվել է վո՛չ թե Տուրատին, այլ բռնվել է ամբողջ սոցիալիստական պացիֆիզմը, վորը ներկայացված է թե՛ Կուցկու, թե՛, ինչպես ստորե կոսենք, Փրանսական «կուցկիականների» կողմից: Խալիպայի բուրժուական մամուլն իրավացի յեր, ճանկելով Տուրատիի ճառի այդ տեղը և ցնծավով այդ առթիվ:

Հիշյալ «b b»-ն վորձում է Տուրատին պաշտպանել նրանով, թե նա իբր խոսել է միայն «աղբերի ինքնորոշման իրավունքի մասին»:

Վա՛տ պաշտպանություն է: Ի՞նչ դործ ունի այստեղ «աղբերի ինքնորոշման իրավունքը», վորն, ինչպես բուրժին հայտնի յե, մարքսիստների ծրագրում վերաբերում է—և միշտ միջաղբային իմպերիալիստիկ ծրագրում վերաբերել է—ննչված ժողովուրդների պաշտպանությանը: Դա ի՞նչ կապ ունի իմպերիալիստական պատերազմի հետ, այսինքն՝ մի պատերազմի, վոր մղում են դադուկները բաժանելու համար, ուրիշ յերկրների ննչելու համար, մի պատերազմի, վորը մղվում է կողոպտող, ճնշող տերությունների միջև այն բանի համար, թե ով ավելի շատ ոտար ժողովուրդներ պետք է ճնշի:

Հենվել աղբերի ինքնորոշման վրա իմպերիալիստական, այլ վոչ թե աղբային պատերազմն արդարացնելու համար—այդ ել ինչո՞վ է տարբերվում Ալեքսինսկու, Երվեյի, Հայնդմանի ճառերից, վորոնք նկատի ունեն Ֆրանսիայում դոյություն ունեցող հանրապետութունը, վորպես հակադրություն Գերմանիայում յեղած միապետության, թեպետ բուրժին ել հայտնի յե, վոր տվյալ պատերազմը տեղի ունի վո՛չ թե հանրապետականության և միապետականության

¹ — «Ժողովրդական Իրավունք»: Խմբ.:

սկզբունքները ընդհարձան հետևանքով, այլ իմպերիալիս-
տական յերկու կողմիցիաների միջև դադութները բա-
ժանելու և այլնի համար:

Տուրատին բացատրում և արդարանում էր, թե ինքն
ամենևին չի «արդարացում» պատերազմը:

Հավատանք ունեցող Տուրատին, Կառուցիու կողմ-
նակից Տուրատին, վոր նրա մտադրութունը պատերազմ
արդարացնելը չի յեղել: Բայց ո՞վ չդիտե, վոր քաղաքա-
կանության մեջ հաշվի յեն առնվում վո՛չ թե մտադրու-
թյունները, այլ դործերը, վո՛չ թե բարի ցանկություններն,
այլ փաստերը, վո՛չ թե յերեակայելին, այլ իրականը:

Թո՛ղ Տուրատին ցանկացած չլինի արդարացնել պա-
տերազմը, թո՛ղ Կառուցիին ցանկացած չլինի արդարացնել
Գերմանիայի սահմանած՝ Թյուրքիայի վաստակաւ կա-
խումը դերմանական իմպերիալիզմից: Բայց գործնականում
յերկու բարի սրացիֆիստների մոտ ել ստացվում և եւնց
պատերազմի արդարացո՛ւմն: Ահա թե ինչն է ելականը:
Յեթե Կառուցիին վո՛չ թե ամսադրում, վորն այնքան տաղա-
կալի յե, վոր վոչ վոք ել չի կարգում, այլ պառլամենտի
ամբիոնից, աշխույժ, տալիսրովող, հարավային խառնվածք
ունեցող բուրժուական հասարակության առաջ արտառաներ
այս ֆրագը—«Կոստանդնուպոլիսը չպետք է տրվի Ռուսաս-
տանին, Թյուրքիան չպետք է վորեւե մեկի վաստալ պե-
տությունը լինի», ապա վոչնչով վարմանալի չեր լինի սրա-
միտ բուրժուաների բացականչությունը. «Հրաշալի՛ յե:
Ճի՛շտ է: Կեցցե՛ Կառուցիին»:

Տուրատին փաստորեն կանգնած էր,—անկախ նրանից,
թե նա ցանկանում էր այդ, դիտակցում էր, թե վոչ,—
բուրժուական մակիլերի տեսակետի վրա, միջնորդի, վորն
առաջարկում է սիրալիր գործարք իմպերիալիստական դե-
շատիչներին միջև: Այստրիային պատկանող իտալական հո-
դերի «աղատադրումն» գործնականում կլինեի իտալական
բուրժուազիայի վարձատրության քողարկում՝ իմպերիա-
լիստական հակայական կողմիցիայի իմպերիալիստական
պատերազմում մասնակցելու համար, վոչ—եյական հավե-
լում Աֆրիկայում դադութները և Դալմատիայում ու Ալ-
բանիայում աղղեցության վճարումները բաժանելու գործին:

Ռեֆորմիստ Տուրատիի համար, թերևս, բնական է կանգ-
նած լինել բուրժուական տեսակետի վրա, բայց Կառուցիին
փաստորեն բնավ վոչնչով չի տարբերվել Տուրատիից:

Իմպերիալիստական պատերազմը չեղադարձելու հա-
մար, բուրժուազիային չողնելու՝ այդպիսի պատերազմը
կեղծությամբ աղգային, աղղեր աղատադրող ներկայացնե-
լու, բուրժուական ռեֆորմիզմի դերքերի վրա չկանգնելու
համար—հարկավոր էր խոսել վո՛չ թե այնպե՛ս, ինչպե՛ս խո-
սում են Կառուցիին ու Տուրատին, այլ այնպե՛ս, ինչպե՛ս խո-
սել է Կարլ Լիբկնեխտը, հարկավոր էր հայտարարել իր
բուրժուազիային, վոր նա կեղծում է, խոսելով աղգային
աղատադրության մասին, վոր տվյալ պատերազմի առն-
չությամբ անհնար է դեմոկրատական հաշտությունը, յե-
թե պրոլետարիատը «դենքը չզարձնի» իր կառավարու-
թյունների դեմ:

Այդպես և միայն այդպե՛ս կարող էր լինել իսկական
մարքսիստի, իսկական սոցիալիստի, այլ վոչ բուրժուական
ռեֆորմիստի դերքավորումը: Վո՛չ թե նա յե իսկապե՛ս աշ-
խատում դեմոկրատական հաշտության ողտին, ով կրկնում
է պացիֆիզմի ընդհանուր, վոչնչե՛ չասող, վոչ մի բանի
չպարտավորեցնող բարի ցանկությունները, այլ նա, ով
մերկացնում է թե՛ տվյալ պատերազմի և թե՛ նրա կողմից
նախապատրաստվող հաշտության իմպերիալիստական
բնույթը, ով ժողովուրդներին հեղափոխության է կոչում՝
ընդդեմ հանցադործ կառավարությունների:

Վո՛մանք յերբեմն փորձում են պաշտպանել Կառուցիուն
և Տուրատիին նրանով, թե լեզալ կերպով չեր կարելի կա-
ռավարության դեմ «ակնարկություններից» ամբողջ ասել,
իսկ այդպիսի «ակնարկություն» կա այդ տեսակի պացի-
ֆիստների մոտ: Բայց դրան պետք է պատասխանել, առա-
ջին, վոր յեթե լեզալ կերպով ճամարտությունն ասելը ան-
հնարին է, ապա այդ փաստարկում է վո՛չ թե ճամարտու-
թյունը ծածկելու ողտին, այլ անլեզալ, այսինքն՝ վոստի-
կանությունից ու գրաքննությունից ազատ կազմակերպու-
թյան և մամուլի անհրաժեշտության ողտին. յերկրորդ,
վոր լինում են պատմական մոմենտներ, յերբ սոցիալիս-

տից պահանջվում է խզել իր կապերն ամեն տեսակի լեզա-
լուծյան հետ. յերրորդ, վոր նույնիսկ ճորտատիրական
Ռուսաստանում Դորբոյլուբովն ու Չերնիշևսկին կարողա-
նում էյին ճամարտությունն ասել, մերթ լուելով 1861 թ.
փետրվարի 19-ի մանիֆեստի մասին, մերթ ծաղրելով և
անարգելով այն ժամանակվա լիբերալներին, վորոնք իսկ և
իսկ այնպիսի ճառեր էյին ասում, ինչպես Տուրատին և
Կաուցկին:

Հաջորդ հոդվածում մենք կանցնենք Փրանսական պա-
ցիֆիկմին, վորն իր արտահայտությունն է գտել Ֆրան-
սիայի բանվորական և սոցիալիստական կադմակերպու-
թյունների հենց նոր կայացած յերկու կոնգրեսների բանա-
ձևերում:

ՀՈԴՎԱԾ (ԿԱՄ ԳԼՈՒԽ) III

ՖԻԱՆՍԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵՐԻ ՅԵՎ ՍԻՆԴԻԿԱԼԻՍՏՆԵՐԻ ՊԱՅԻՖԻԶՄԸ

Հենց նոր ավարտվեցին Փրանսական C.G.T. (Confé-
dération Générale du Travail, Բանվորական արհեստակցական
միությունների ընդհանուր միություն) և Փրանսական սո-
ցիալիստական կուսակցության կոնգրեսները: Ներկա մո-
մենտում սոցիալիստական պացիֆիկմի ճամարիտ նշանակու-
թյունն ու ճամարիտ դերն առանձնապես ցայտուն են գծու-
ղվել այդտեղ:

Ահա սինդիկալիստական կոնգրեսի այն բանաձևը, վորը
միաձայն ընդունվել է բոլոր, թե՛ մոլի չովինիստների
մեծամասնության՝ տխրահռչակ Ժուռ-յի (Jouhaux) գլխա-
վորությամբ, թե՛ անարխիստ Բրուտշուի, թե՛... «ցիմմեր-
վալդիստ» Մեերհայմի կողմից:

«Ազգային կոսպորատիվ ֆեդերացիաների, սինդիկատ-
ների (արհեստակցական միությունների) միության, աշ-
խատանքի բորսաների կոնֆերենցիան, ի դիտություն ընդու-
նելով Միացյալ Նահանգների նախագահի հայտագիրը, վո-
րով նա «հրավիրում է ներկայումս իրար դեմ պատերազ-
մող բոլոր ազգերին հրապարակով հայտնել իրենց հայացք-

ները, թե ինչ պայմաններով կարելի կլինե՞ր վերջ տալ պա-
տերազմին», —

խնդրում է, վոր Փրանսական կառավարությունը հա-
մաձայնի այդ առաջարկությանը:

Հրավիրում է կառավարությանն իր վրա վերցնել իր
դաշնակիցների առաջ նման յելույթով հանդես գալու նա-
խաձեռնությունը, վորպեսզի արագացվի հաշտության
ժամը:

Հայտարարում է, վոր ազգերի ֆեդերացիան, վորը
վերջնական խաղաղության դրավականներից մեկն է հան-
դիսանում, կարող է ապահովվել միայն բոլոր՝ թե՛ վոքը,
թե՛ մեծ ազգերի անկախության, տերիտորիալ անձեռն-
մխելիության և քաղաքական ու սնտեսական ազատության
պայմաններում:

Կոնֆերենցիայում ներկայացված կադմակերպություն-
ներն իրենց վրա պարտավորություն են վերցնում պաշտ-
պանել և տարածել այդ դադավարը բանվորական մասնա-
ները մեջ, վորպեսզի վերջ տրվի անորոշ, յերկմիտ կացու-
թյանը, վորը ձեռնտու չե միայն դադանի դիվանագիտու-
թյանը, վորի դեմ միշտ էլ ըմբոստացել է բանվոր դասա-
կարգը»:

Ահա միանգամայն Կաուցկու վորով «զուտ» պացիֆի-
մի մի նմուշ, — պացիֆիկմի, վորին հավանություն է տվել
բանվորների պաշտոնական կադմակերպությունը, վորն
ընդհանուր վոչինչ չունի մարքսիզմի հետ ու մեծ մասամբ
բազկացած է չովինիստներից: Մեր առջևն է — պացիֆիս-
տական դատարկ Փրազի պլատֆորմի վրա չովինիստների և
«կաուցկիականների» քաղաքական միավորման վերաբերյալ
աչքի ընկնող, ամենալուրջ ուշադրության արժանի մի
փաստաթուղթ: Յեթե նախորդ հոդվածում մենք աշխատել
ենք ցույց տալ, թե ինչն է չովինիստների և պացիֆիստնե-
րի, բուրժուաների և սոցիալիստական ունֆորմիստների
հայացքների միասնության տեսական հիմքն, ապա այժմ այդ
միասնությունը գործնականորեն իրականացված ենք տեսնում
մի այլ իմպերիալիստական յերկրում:

Յիմմերվալդի կոնֆերենցիայում, 1915, IX. 5—9, Մեեր-

Հայրը Հայտարարել է՝ «Le parti, les Jouhaux, le gouvernement, ce ne sont que trois têtes sous un bonnet» («Կուսակցությունը, սրարոնայք ժողովները, կառավարությունը,—այդ՝ յերեք զուխն է մի թասակի տակ», այսինքն՝ նրանք մի՛ էյություն են)։ 1916 թվի դեկտեմբերի 26-ին C.G.T.-ի կոնֆերանսիայում Մեերհայմը՝ ժողովի հետ միասին՝ քվեարկում է պացիֆիստական բանաձևը։ 1916 թվի դեկտեմբերի 23-ին զերմանական սոցիալ-լիպերիալիստների ամենամանկեղծ և ամենածայրահեղ որդաններից մեկը՝ Բեմնիցի «Volksstimme»¹ լրագիրը զետեղում է հետևյալ խմբագրական հոդվածը. «Բուրժուական կուսակցությունների կազմալուծումը և սոցիալ-դեմոկրատական միասնություն վերականգնումը»։ Այդ հոդվածում, ինքնին հասկանալի չե, վոր դրվառվում է Զյուլեկումի, Լեդինի, Շայդեմանի և Ընկ., զերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության ամբողջ մեծամասնություն, նաև զերմանական կառավարություն խաղաղասիրությունը, և Հայտարարվում է, վոր «պատերազմից հետո կուսակցության գումարած առաջին համադումարը պետք է վերականգնի կուսակցության միասնությունը, բացառություն չա՛յն փանատիկոսների, վորոնք հրաժարվում են կուսակցական անդամավճար տալուց» (այսինքն՝ կարլ Լիբկնեխտի կողմնակիցները— «կուսակցության միասնություն՝ կուսակցության վարչության, ռայխստագի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի և արհեստակցական միությունների քաղաքականության հիման վրա»։

Այդտեղ պարզից ել պարզ կերպով արտահայտված է Գերմանիայի անկեղծ սոցիալ-չովինիստների «միասնություն» զաղափարը և հրապարակված է «միասնություն» քաղաքականությունը Կաուցկու և Ընկ. ու «սոցիալ-դեմոկրատական աշխատավորական խմբակի» հետ,—միասնություն—պացիֆիստական ֆրակցիայի հիման վրա,—«միասնություն», վորը Ֆրանսիայում 1916 թ. դեկտեմբերի 26-ին իրականացվել և ժողովի և Մեերհայմի միջև։

Իտալական սոցիալիստական կուսակցության կենտրոն-

նական որդան «Avanti!»-ն 1916 թ. դեկտեմբերի 28-ի խմբագրական հոդվածում դրում է.

«Յեթե Բիստուատին և Զյուլեկումը, Բոնոմին և Շայդեմանը, Սամբան ու Դավիդը, Ժոլոն ու Լեդինն անցել են բուրժուական նացիոնալիզմի բանակը և մատնել են (hanno tradito, զավաճանություն են կատարել) ինտերնացիոնալիստների զաղափարական միասնությանը, վորին խոստացել էյին ծառայել հավատով և ճշմարտությանը, ապա մենք կմանք զերմանական մեր ընկերների հետ, ինչպիսիք են Լիբկնեխտը, Լեդերբուրը, Հոֆմանը, Մայերը, Ֆրանսական մեր ընկերների հետ, ինչպիսիք են Մեերհայմը, Բլանը, Բրիդոնը, Ռաֆֆեն-Դյուֆանը, վորոնք չեն փոխվել և չեն տատանվել»։

Տեսե՛ք, թե ինչպիսի չիտթ է ստացվում։

Բիստուատին ու Բոնոմին իտալական սոցիալիստական կուսակցությունից զեռ պատերազմից առաջ վտարվել են, վորպես ռեֆորմիստներ ու չովինիստներ։ «Avanti!»-ն նրանց դնում է Զյուլեկումների ու Լեդինների հետ մի մալարակի վրա և, իհարկե, միանդամայն ճիշտ կերպով, բայց Զյուլեկումը, Դավիդն ու Լեդինը զերմանական իրոսոցիալ-դեմոկրատական, իրոք սոցիալ-չովինիստական կուսակցության դուխեն կանգնած, և հենց նույն «Avanti!»-ն զեմ է դուրս դալիս նրանց վտարելուն, նրանց հետ կապը խզելուն, III Ինտերնացիոնալ կազմելուն։ «Avanti!»-ն Հայտարարում է, և միանդամայն իրավացի կերպով, վոր Լեդինն ու Ժոլոն անցել են բուրժուական նացիոնալիզմի բանակը, հակադրելով նրանց՝ Լիբկնեխտին ու Լեդերբուրին, Մեերհայմին ու Բրիդոնին։ Բայց մենք տեսնում ենք, վոր Մեերհայմը փխրկում է ժողովի հետ միասին, իսկ Լեդինը—Բեմնիցի «Ժողովրդի Ձայն»-ի բերանով—Հայտարարում է, վոր ինքը վստահ է, թե կվերականգնվի կուսակցության միասնությունը, վտարելով միայն Լիբկնեխտի համախոհներին, այսինքն՝ մի միասնություն «սոցիալ-դեմոկրատական աշխատավորական խմբի» (այդ թվում նաև Կաուցկու) հետ, վորին պատկանում է Լեդերբուրը!!։

Այդ չիտթն առաջացել է նրանից, վոր «Avanti!»-ն

¹ — «Ժողովրդի Ձայն»։ Խմբ.։

բուրժուական պացիֆիզմը խառնում է հեղափոխական սոցիալ-դեմոկրատական ինտերնացիոնալիզմի հետ, իսկ այնպիսի փորձված պոլիտիկաներ, ինչպես Լեգինն ու Ժուռնեն, հրաշալի կերպով ըմբռնել են սոցիալիստական և բուրժուական պացիֆիզմի նույնությունը:

Յեւ իրոք, ինչպե՞ս չցնծան պարոն Ժուռն և նրա թերթի, չովինիստական «La Bataille»-ը¹ Ժուռյի և Մեերհայմի «միահամուռության» առթիւ, յերբ միաձայն ընդունված բանաձևում, վոր մենք մեջ ելինք բերել լրիւ, գործնականում բացի բուրժուական-պացիֆիստական ֆրադներէից բնաւ վոր չինչ չկա, չկա հեղափոխական գիտակցության ստվերն անգամ, չկա սոցիալիստական վոչ մի միտք:

Ծիծաղելի չե՞ արդոք խոսել «բոլոր փոքր ու մեծ ազգերի տնտեսական ազատության» մասին, լուրջան մատնելով այն, վոր մինչև չտապալվեն բուրժուական կառավարութիւնները և եքսպրոպրիացիայի չենթարկվի բուրժուական, այդ «տնտեսական ազատութիւնը» ժողովրդի նույնպիսի խաբեյութիւն կլինի, ինչպես և ժամանակակից հասարակության մեջ ընդհանրապես քաղաքացիների, մանր գյուղացիների ու հարուստների, բանվորների ու կապիտալիստների «տնտեսական ազատության» վերաբերյալ ֆրադներն են:

Այն բանաձևը, վորի ոգտին Ժուռն և Մեերհայմը քվեարկել են միաձայն, ամբողջապես և մինչև վերջը տողորված է «բուրժուական նացիոնալիզմի» դադափարներով, վորն «Avanti!»-ն արդարացիորեն նկատում է Ժուռյի մոտ, բայց վորը նույն «Avanti!»-ն տարրերնակ կերպով չի տեսնում Մեերհայմի մոտ:

Բուրժուական նացիոնալիստները միշտ և ամենուրեք պնդադարձվել են առհասարակ «ազգերի ֆեդերացիայի» վերաբերյալ «ընդհանուր» ֆրադներով, «բոլոր մեծ ու փոքր ազգերի տնտեսական ազատության» վերաբերյալ ֆրադներով: Սոցիալիստներն, ի տարբերութիւն բուրժուական նացիոնալիստներից, ասել են և ասում են՝ «մեծ ու փոքր ազգերի տնտեսական ազատության» մասին ճտեղը դարձե-

լի կեղծալորութիւն է, քանի դեռ ազգերից միմեկիւր (որին, Անգլիան ու Յրանիան) ներդրում են արտասահմանում, այսինքն՝ փոքր և հետամնաց ազգերին փոխառութիւն են տալիս վաշխառուական տոկոսներով տասնյակ և տասնյակ միլիարդ ֆրանկի կապիտալներ, իսկ փոքր և թույլ ազգերն ստրկական կախում ունեն նրանցից:

Սոցիալիստները չեյին կարող մճռական բողոք չհայտնել այդ բանաձևի ամեն մի փրագի դեմ, վորի ոգտին միաձայն քվեարկել են Ժուռն ու Մեերհայմը: Սոցիալիստներն այդ բանաձևին ուղիղ հակառակ՝ իհայտարարելին, թե Վիլսոնի յեղութիւն ափաշկարա սուտ է և կեղծալորութիւն, վորովհետև Վիլսոնն այն բուրժուազիայի ներկայացուցիչն է, վորը պատերազմում միլիարդներ է չահել, այն կառավարության գլուխ է, վորը Միացյալ Նահանգների սպառազինումը հասցրել է կատաղի չափերի՝ բացահայտորեն յերկրորդ մեծ իմպերիալիստական պատերազմի նպատակներով:—վոր ֆրանսական բուրժուական կառավարութիւնը, վորի ձեռքերն ու վոտքերը կապված են ֆինանսական կապիտալի կողմից, վորի ստրուկն է նա, և իմպերիալիստական դադտնի, ամբողջովին թալանչիական ու ռեակցիոն դաշնադրեր է կնքել Անգլիայի ու Ռուսաստանի հետ և այլն, անկարող է դեմոկրատական և «արդարացի» հաշտության հարցում այդպիսի ստից բացի՝ վորեւ բան ասել, կամ վորեւ բան անել:—վոր նման հաշտության համար պայքարելը չի նշանակում կրկնել ընդհանուր, դատարկ, վոչինչ չասող, վոչ մի բանի չպարտալորեցնող, դորձնականում միայն իմպերիալիստական դարչելիութիւնը դեղադարձող բարի և քողցրիկ պացիֆիստական ֆրադներ, այլ ժողովուրդներին նշարտութիւնը հայտարարել, հենց հայտարարել ժողովուրդներին, վոր դեմոկրատական և արդարացի հաշտութիւն ձեռք բերելու համար պետք է տապալել բոլոր պատերազմող յերկրների բուրժուական կառավարութիւնները և դրա համար ոգտադործել միլիոնավոր բանվորների սպառազինութիւնը, նաև ընակչության մասսաների ընդհանուր ցատումը՝ կյանքի թանգության և իմպերիալիստական պատերազմի սարսափների հանդեպ:

¹ — «Ճակատամարտ»: Խմբ.:

Ահա թե ինչ պետք է ասեյին սոցիալիստները՝ Ժողովի
և Մեերհարթի բանաձևի փոխարեն:

Ֆրանսական սոցիալիստական կուսակցութունն իր
կոնդրեստով, վորը տեղի ունեցավ Փարիզում C.G.T.-ի կոնգ-
րեսի հետ միաժամանակ, վո՛չ միայն չստացաւ այդ, այլ ե՛լ
ավելի վատքաք բանաձև ընդունեց 2·838 ձայնով, 109-ի դեմ
և 20-ի ձեռնպահութամբ, այսինքն՝ սոցիալ-չովինիստները
(Ռենդելն ու Լնկ.), այսպես կոչված «մաթորիսները»,
մեծամասնության կողմնակիցները) և լուգեալանները (Լոն-
դելի կողմնակիցները, Ֆրանսական կառչկիականների)
բլոկով!։ Ընդվորում, ցիմմերվալդիստ Բուրդերոնը և կին-
տալիստ (kinthalien, Կինտալի կոնֆերենցիայի մասնակից)
Ռաֆֆեն-Դյուսանսը թեր են քվեարկել այդ բանաձևին!։

Մենք չենք բերի այդ բանաձևի ընադիրը,—վորովհետև
այն անչափ յերկար է և բոլորովին հետաքրքրական չէ։ Նրա
մեջ հաշտության մասին բարի և քաղցրիկ ֆրազների լող-
փն պատրաստակամության հայտարարութիւնն է արված՝
այսուհետև ևս արկացել, այսպես կոչված, «հայրենիքի
պաշտպանությանը» Ծրանախաղում, այսինքն՝ պաշտպանել
խմբերի արխտական պատերազմը, վոր Ծրանախան մղում է,
ղաշնակցելով այնպիսի ե՛լ ավելի խոշոր և ուժեղ ամադակ-
ների հետ, ինչպիսիներն են Անդլիան և Ռուսաստանը։

Հեռակարար, Գրանխաղում սոցիալ-չովինիստներին միությունը պաշտօնիստներին (կամ կառուցկիականներին) և ցրմանը լաղիստներին մի մասը Հեռ լիսստ և դարձել վճ մի-աջն C.G.T.-ում, այլ նաև սոցիալիստական կուսակցության մեջ:

ՀՈՒՎԱԾ (ԿԱՄ ԳԼՈՒԽ) IV

ՅԻՄՄԵՐՎԱԼԴԷ ՀԱՄԲԱՐԱԺԱՆԻ ՎՐԱ.

Դեկտեմբերի 28-ին Բեռլինում ստացվեցին Փրանսական
Թերթերը՝ C.G.T. կոնգրեսի Հաշվետվությամբ, իսկ դեկ-
տեմբերի 30-ին Բեռնի և Յյուրիխի սոցիալիստական Թեր-
թերում լույս տեսավ Բեռնի I.S.K. («Internationale Sozialisti-
sche Kommission») Միջազգային Սոցիալիստական Հանձնաժո-

ղովի, Յիմմեքլաղական միավորման դործադիր օրդանի նոր կոչը: Այդ կոչում, վորը թվադրված է 1916 թ. դեկտեմբերի մեկը, խոսովում է Գերմանիայի, նաև Վիլսոնի և այլ չեզոք յեղերները կողմից առաջարկված հաշտության մասին, ընդվորում կառավարական բոլոր այդ յեղութենեան նմանված են—իհարկե, միանդամայն արդարացի կերպով անվանված են—«Հաշտության կատակերդական խաղ», «սեփական ժողովուրդներին հիմարացնելու խաղ», «դիմանադեաների կեղծախոր սլացիֆիստական շարժումներ»:

Այդ կատակերգությանն ու ստիճ հակադրվում է, վորպես «միակ ուժ», վորն ընդունակ է իրականացնել հաշտությունը և այլն, միջադեպին պրոլետարիատի «հաստատուն կամքը»՝ «պայքարի զենքը դարձնել վ՛ո՛չ թե իր յեղբայրների դեմ, այլ իր սեփական յերկրում յեղած թշնամու դեմ»:

Բերված քաղվածքներն ակնառու կերպով ցույց են տալիս մեզ յերկու աբստապեան տարբեր քաղաքականությաններ, վրոնք մինչև այժմ կարծես հաշտ ապրել են Յիմմերվալդական միավորման ներսում և վրոնք այժմ վերջնականապես բաժանվել են:

Մի կողմից, Տուրաթին վերոշակի. և միանգամայն արդարացի առում է, վոր Գերմանիայի, Վիլսոնի և այլոց առաջարկութիւնն խաւաւան «սոցիալիստական» պացիֆիզմի միայն «քառափնխումն» է յեղել. գերմանական սոցիալ-շովինիստները հայտարարութիւնը և Փրանսականներն քվեարկութիւնը յույց և տալիս, վոր թե՛ մեկը և թե՛ մյուսները հիանալի կերպով զնահատել են նրանց քաղաքականութիւնն պացիֆիստական քողարկման ոգւոտը:

Մյուս կողմից, Մելադզային Սոցիալիստական Հանձնա-
ժողովի կողք բոլոր պատերազմող և չեզոք կառավարու-
թյուններին պաշտփիզմն անվանում է կատակերգություն և
կեղծամոլություն :

Մի կողմից, Ժուռն միանում է Մեերհայմին, Բուրգերները, Լոնդեն ու Ռաֆֆեն-Դյուսանը՝ Ռենդելին, Սամբային և Թոմային, իսկ զերմանական սոցիալ-չովինիստները՝ Զյուդեկովը, Դավիդը, Շարդեմանը հռչակում են

«սոցիալ-դեմոկրատական միասնություն» առաջիկա «վերա-կանդնումը»՝ կառուցվու և «սոցիալ-դեմոկրատական աշխա-տավորական խմբի» հետ:

Մյուս կողմից, Միջազգային Սոցիալիստական Հանձնա-թուղթը կոչ է անում «սոցիալիստական փոքրամասնու-թյուններին» յեռանդուն կերպով սլաքաբերել «իրենց կառա-վարություններին» «և նրանց սոցիալ-հայրենասիրական վարձկաններին» (Södlinge) դեմ:

Կամ—կամ:

Մերկացնե՞լ բուրժուական պացիֆիզմի անբուխդա-կությունը, անհեթեթությունը, կեղծավորությունը, քե՞ն «բառափոխել» այն՝ «սոցիալիստական» պացիֆիզմի: Պայ-քարե՞լ ժուռների ու Ռենոդեյների, Լեգլենների ու Դավիդ-ների դեմ, վորպես կառավարությունների «վարձկաններին» դեմ, քե՞ն միանալ նրանց՝ Փրանսական կամ դերմանական տեսակի պացիֆիստական դատարկ ճարտասանություն հի-ման վրա:

Այժմ այդ դժով և ընթանում ջրբաժանը Յիմմերվալ-դի աջ թևի, վորը միշտ բոլոր ուժերով ընդդիմացել և սո-ցիալ-չովինիստներից պառակտվելուն, և Յիմմերվալդի ձախ թևի միջև, վորը դեռ Յիմմերվալդում գուր չեր աշխատում հրապարակորեն բաժանվել աջից, հանդես գալ թե՛ կոն-ֆերենցիայում, թե՛ նրանից հետո մամուլում հատուկ պլատֆորմով: Հաշտություն մոտենալը, կամ թեկուզ բուր-ժուական միջանի տարրերի կողմից հաշտության հարցը ուժեղին քննարկելը վո՛չ թե պատահաբար, այլ անխուսա-փելի կերպով առաջ է բերել մե՛կ և մյո՛ւս քաղաքականու-թյունների առանձնապես ակնառու տարրերուն: Վո-րովհետև հաշտությունը միշտ էլ պատկերացել է և պատ-կերանում է բուրժուական պացիֆիստներին և նրանց «սո-ցիալիստական» ընդորինակողներին կամ վերերդողներին վորպես սկզբունքորեն տարրեր մի բան, այն՝ խմստով, վոր «պատերազմը խաղաղ քաղաքականության շարունա-կությունն է, իսկ խաղաղությունը՝ պատերազմական քա-ղաքականության շարունակությունը» դադափարը միշտ էլ չհասկացված և մնացել թե՛ մեկ և թե՛ մյուս յերանգի պա-

ցիֆիստների համար: Վոր 1914—1917 թվականների իմ-պերիտլիստական պատերազմը շարունակությունն է 1898—1914 թվականների, յեթե վո՛չ ե՛լ ավելի վաղ շրջանի իմ-պերիտլիստական քաղաքականության, այդ չեն կամեցել և չեն ել կամենում տեսնել վո՛չ բուրժուաները, վո՛չ ել սո-ցիալ-չովինիստները: Վոր հաշտությունն այժմ, յեթե հե-ղափոխական ճանապարհով չտապալվեն բուրժուական կա-ռավարությունները, կարող և միայն իմպերիալիստական պատերազմը շարունակող իմպերիալիստական հաշտություն լինել, այդ չեն տեսնում վո՛չ բուրժուական, վո՛չ ել սո-ցիալիստական պացիֆիստները:

